«Գյուղական տուրիզմի զարգացում» միջոցառման համար հայտերի գնահատման (առավելագույն) չափանիշներն են՝

1) տնտեսական արդյունավետություն՝ 10 բալ (շահութաբերությունը),
2) բյուջեների բոլոր մակարդակներին հարկային մուտքերի ծավալը՝ 5 բալ,
3) ներդրումային ժամկետը՝ 10 բալ,
4) նոր ստեղծվող աշխատատեղերի քանակը՝ 5 բալ,
5) մարքեթինգային քաղաքականությունը և արտադրանքի արտաքին տեսքը՝ 5 բալ,
6) դրամաշնորհի գումարի հարաբերակցությունը բիզնես նախագծի ընդհանուր արժեքին՝ (ներառյալ գույքային ներդրումը) 10 բալ,
7) բիզնես նախագծում նորարարական բաղադրիչի առկայությունը՝ 5 բալ,
8) բիզնես նախագծի իրականացման ռիսկի մակարդակը՝ 10 բալ,
9) նախագծի բնապահպանական անվտանգությունը՝ 10 բալ,
10) տեղական գյուղմթերքի և այլ հումքի օգտագործումը՝ 10 բալ,
11) տարածքային տեղակայումը, ապակենտրոնացումը՝ 10 բալ
12) ծրագրի իրատեսական լինելը՝ 10 բալ:

- Պարտադիր պայման է հանդիսանում սույն ծրագրի իրականացումը Արցախի Հանրապետության տարածքում, ինչպես նաև ծրագրի ընդհանուր արժեքի՝ 20 տոկոսի չափով հայտատուի սեփական միջոցների ներդրումը:
- Հայտատուի կողմից սեփական միջոցների ներդրումը իրականացվում է դրամական տեսքով:
- Շահառուն մինչև ծրագրի իրականացման մեկնարկը դրամական միջոցները փոխանցում է իր հաշվարկային հաշվին:
- Նշված գումարը հանդիսանում է որպես բիզնես նախագծի իրականացման երաշխիք և կարող է օգտագործվել ծրագրի միայն վերջին փուլում: